Կարգապահական գործ թիվ 13-010ԿԳ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի հոկտեմբերի 08-ի թիվ 228-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/144-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Երվանդ Վարոսյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Լուսինե Սահակյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Կարապետ Աղաջանյանի, Լիպարիտ Սիմոնյանի կազմով,

Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

Քննության առնելով փաստաբան Հովհաննես Մաթևոսյանին (արտոնագիր թիվ 956) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

16.04.2013թ-ին Պալատ է մուտքագրվել /մուտք՝ հմ.102/ Ալբերտ Մկրտչի Հովհաննիսյանի /այսուհետ նաև՝ Դիմող/ դիմումը, կից՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 26.10.2012թ-ին թիվ ԵՄԴ/0203/02/12 քաղաքացիական գործով կայացրած վճիռը, խնդրելով նշանակել ծառայողական քննություն Պալատի փաստաբան Հովհաննես Մաթևոսյանի /այսուհետ նաև՝ Պատասխանող/ նկատմամբ և պարտավորեցնել վերջինիս, որ հետ վերադարձնի իր վճարած 85.000 ՀՀ դրամ գումարը, հակառակ դեպքում կդիմի համապատասխան մարմիններին՝ իրեն պատասխանատվության կանչելու համար:

Դիմողը նշված դիմումով հայտնել է, որ 07.05.2012թ-ին Պատասխանողի հետ կնքել է փաստաբանական վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր, որի հիման վրա վերջինիս առձեռն վճարել է 85.000 ՀՀ դրամ: Դիմողը փաստաբանի միջոցով հայց է ներկայացրել դատարան՝ վնասի հատուցման պահանջով: Գործի դատաքննության ընթացքում փաստաբանը ներկայացրել է լրացուցիչ հայց, որով պահանջել է հայցվորի կողմից փաստաբանին վճարած 85.000 ՀՀ դրամը ներառել դատական ծախսերի մեջ և բռնագանձել պատասխանողից: Որպես լրացուցիչ հիմնավորում՝ փաստաբանը դատարան է ներկայացրել իր և հայցվորի միջև կնքված պայմանագիրը, որում 85.000 դրամի վճարումը սահմանված է որպես հետագայում վճարելիք: Դիմողի հայցը վնասի հատուցման մասով դատարանը բավարարել է, իսկ փաստաբանին վճարած գումարը պատասխանողից բռնագանձելու մասով՝ մերժել է, այն

հիմնավորմամբ, որ հայցվորի կողմից փաստաբանին 85.000 դրամ վճարած լինելու մասին դատարանին որևէ ապացույց չի ներկայացվել:

Դիմողը գտնում է, որ փաստաբան Հովհաննես Մաթևոսյանին իր վճարած 85.000 ՀՀ դրամը պատասխանողից բռնագանձելու մասին պահանջը մերժվել է փաստաբանի մեղքով, քանի որ վերջինս գումարի ստացումը փաստաթղթով չի ձևակերպել, որի պատճառով այն ստացած լինելու մասին դատարանին փաստաթուղթ ներկայացնել չի կարողացել:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

22.04.2013թ-ին Պալատի նախագահի կողմից կայացվել է թիվ 57-Ա/13-010ԿԳ որոշումը՝ փաստաբան Հովհաննես Հայկազի Մաթևոսյանի /արտոնագիր թիվ 956/ նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 կետերի պահանջների խախտման հատկանիշներով կարգապահական վարույթ հարուցելու մասին:

Պալատի նախագահի՝ 02.05.2013թ-ի թիվ 62-Ա/ԿԳ13-010 որոշմամբ կասեցվել է Պատասխանողի նկատմամբ Պալատի նախագահի 22.04.2013թ-ի թիվ 57-Ա/13-010ԿԳ որոշմամբ հարուցված կարգապահական վարույթը՝ նկատի ունենալով, որ տվյալ վարույթի կասեցման համար առկա են <<Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի>> 26-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված հիմքերը:

Պալատի նախագահի՝ 26.02.2015թ-ի թիվ 62-Ա որոշմամբ վերսկսվել է Պատասխանողի նկատմամբ Պալատի նախագահի 22.04.2013թ-ի թիվ 57-Ա/13-010ԿԳ որոշմամբ հարուցված կարգապահական գործի վարույթը, այն հիմնավորմամբ, որ Ալբերտ Հովհաննիսյանի կողմից 21.05.2013թ-ին առարկություն ներկայացնելու հիմքով նույն օրը վերացվել է թիվ ԵՄԴ/1124/03/13 գործով վարույթի վճարման կարգադրությունը:

Սույն թվականի մարտի 06-ին Պալատ է մուտքագրվել Պատասխանողի՝ 04.03.2015թ-ի գրավոր առաջարկը, որով վերջինս Պալատի նախագահին առաջարկել է կասեցնել իր նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 կետերի պահանջների խախտման հատկանիշներով Պալատի նախագահի 22.04.2013թ-ի թիվ 57-Ա/ԿԳ որոշմամբ հարուցված 13-010 կարգապահական վարույթը, մինչև թիվ ԵՄԴ/0881/02/13 քաղաքացիական գործով դատական ակտի վերջնական կայացումը:

Պալատի նախագահի՝ 09.03.2015թ-ի թիվ 71-Ա որոշմամբ կասեցվել է Պատասխանողի նկատմամբ Պալատի նախագահի 22.04.2013թ-ի թիվ 57-Ա/13-010ԿԳ որոշմամբ հարուցված կարգապահական գործի վարույթը, մինչև թիվ ԵՄԴ/0881/02/13 քաղաքացիական գործով՝ ըստ էության լուծող վերջնական դատական ակտ կայացնելը /ուժի մեջ մտնելը/:

Պալատի նախագահի՝ 28.04.2015թ-ի թիվ 93-Ա որոշմամբ վերսկսվել է Պատասխանողի նկատմամբ Պալատի նախագահի 22.04.2013թ-ի թիվ 57-Ա/13-010ԿԳ որոշմամբ հարուցված կարգապահական գործի վարույթը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերացվել է թիվ 57-Ա/13-010ԿԳ կարգապահական վարույթի կասեցման հիմքը, այն է՝ ՀՀ վճռաբեկ դատարանում քննվող թիվ ԵՄԴ/0881/02/13 քաղաքացիական գործով կայացվել է գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտ:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների</u>

ցուցմունքները.

Դիմողի համառոտ բացատրությունը.

29.04.2013թ-ին, 11.03.2015թ-ին, 18.05.2015թ-ին Դիմողը գրավոր ծանուցվել է ք. Երևան, Անդրանիկի 52 հասցե ներկայանալու և փաստաբան Հովհաննես Մաթևոսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում բացատրություն տալու և այն հիմնավորող ապացույցներ ներկայացնելու մասին:

Ներկայանալով նշված ծանուցումներով՝ Դիմողը բանավոր բացատրություն է տվել այն մասին, որ փաստաբան Հովհաննես Մաթևոսյանի հետ կնքելով <<Վճարովի փաստաբանական ծառայությունների մասին>> պայմանագիր՝ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն նրան առձեռն վճարել է 85.000 ՀՀ դրամ, սակայն այդ գումարը փաստաբանը խաբեությամբ յուրացրել է:

Այդ հանգամանքը Դիմողը հիմնավորել է նրանով, որ դատաքննության ավարտից հետո, երբ վճիռ է կայացվել, դատական ծախսերի մասով դատարանը փաստել է, որ նշված գումարը փաստաբանի կողմից վճարված չլինելու և համապատասխան անդորրագիրը դատարան չներկայացնելու հետևանքով այդ գումարը գործով պատասխանողից ենթակա չէ բռնագանձման:

Դիմողը նաև նշել է, որ քաղաքացիական գործի քննության ողջ ընթացքում փաստաբան Հովհաննես Մաթևոսյանը իրեն պատշաճ իրավաբանական օգնություն ցույց չի տվել, ընդամենը մեկ անգամ է ներկայացել դատարան, չի կազմել հայցադիմումը, չի գրել վերաքննիչ բողոքը, ինչի հետևանքով բաց է թողնվել բողոքարկման ժամկետը, իսկ գումարը վերադարձնելու իր պահանջից վերջինս հրաժարվել է:

Միաժամանակ, Դիմողը ներկայացրել է մի շարք փաստաթղթեր և միջնորդել ժամանակ տրամադրել՝ իր կողմից փաստաբանին վճարված գումարի վերաբերյալ այլ ապացույցներ ներկայացնելու համար, որոնք վերջնական տեսքով ներկայացվել են 22.05.2015թ-ին, իսկ գրավոր բացատրություն Դիմողը չի ներկայացրել:

Խորհրդի նիստին ներկայանալով Դիմողն ըստ էության ներկայացրել է նույն դիրքորոշումը:

Պատասխանողի համառոտ բացատրությունը.

01.06.2015թ-ին Պատասխանողը ներկայացրել է գրավոր բացատրություն, հետևյալի մասին՝

<<Ես՝ Հովհաննես Մաթևոսյանս, բացատրություն եմ տալիս հետևյալի մասին:

Ալբերտ Հովհաննիսյանի դիմումի հիման վրա իմ նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, այն արարքի համար, որ ես իբրև ունենալով լրացուցիչ պահանջի՝ փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի բռնագանձման բավարարման համար անհրաժեշտ ապացույց՝ վճարման անդորրագրի ներկայացման հնարավորություն, այն չեմ կազմել և չեմ ներկայացրել դատարանին, որն էլ Պալատի նախագահի կողմից գնահատվել է, որպես անբարեխղճություն և այդ հիմքով Պալատի նախագանի 22.04.2013թ-ի որոշմամբ Կանոնադրության 2.7.2 և 3.5.5 կետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Դիմողի կողմից հայտնածը չի համապատասխանում իրականությանը, քանի որ դիմողը կամովին չի վճարել կատարված իրավաբանական ծառայությունների մատուցման դիմաց գումարը, իսկ նման պայմաններում ես չէի կարող ներկայացնել դատարանին վճարման մասին անդորրագիր, որը կհանդիսանար որպես ապացույց:

Իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված գումարի բռնագանձման պահանջով ես դիմել եմ դատարան:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ - ԵՄԴ/0881/02/13 վճռով Ալբերտ Հովհաննիսյանից հօգուտ ինձ բռնագանձվել է 85.000 ՀՀ դրամ, որպես իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված գումար: Դիմողը փորձել է վճիռը բողոքարկել Վերաքննիչ քաղաքացիական և վճռաբեկ դատարաններ, սակայն վճիռը մնացել է անփոփոխ և օրինական ուժի մեջ:

Թիվ - ԵՄԴ/0881/02/13 վճռով ապացուցվել է , որ Դիմող՝ Ա. Հովհաննիսյանը չի վճարել ինձ իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված գումարը, այսինքն, ես չեմ ունեցել ապացույց այն մասին, որ Ա. Հովհաննիսյանը վճարել է այդ գումարը և չէի կարող այն կազմել ներկայացնել, որպես ապացույց>>:

01.06.2015թ-ի բացատրությանը կից Պատասխանողի կողմից ներկայացվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ - ԵՄԴ/0881/02/13 վճռի և կատարողական թերթի պատճենները:

Խորհրդի նիստի ընթացքում պատասխանողը պնդեց իր բացատրությունը:

<u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը</u>

Կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որի համաձայն.

<< Վերոգրյալը հիման վրա, ղեկավարվելով <<Փաստաբանության մասին>> ՀՀ օրենքի 27-րդ, 39.5-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Վարույթի կարգի 22-րդ կետը, ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում, հաստատված համարելով սույն եզրակացության 7-րդ կետում նշված փաստերը, փաստաբան Հովհաննես Մաթևոսյանի վերաբերյալ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջների առերևույթ խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթի գործը համարում եմ ամբողջությամբ նախապատրաստված ՀՀ Փաստաբանների պալատի խորհրդում ներկայացնելու, ըստ էության քննելու և վերջնական որոշում կայացնելու համար>>:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կարգապահական գործում առկա են հետևյալ ապացույցները.

Սույն կարգապահական վարույթով գործի շրջանակներում Դիմողի կողմից ներկայացվել են հետևյալ գրավոր փաստաթղթերը.

- ✓ Պալատի նախագահին ուղղված՝ 15.04.2013թ-ի դիմումը:
- ✓ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 26.10.2012թ-ի վճռի պատճենը:
- ✓ Պալատի նախագահին ուղղված՝ 12.02.2015թ-ի դիմումը:
- ✓ Թիվ ԵՄԴ/1124/03/13 դատական գործի քաղվածքը:
- ✓ Պալատի նախագահին ուղղված՝ 13.05.2013թ-ի դիմումը:

- ✓ Երևան քաղաքի Մալաթիա- Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ. Հովհաննիսյանի՝ 26.06.2013թ-ի գրության պատճենը:
- ✓ 21.06.2013թ-ի դիմումի պատճենը:
- ✓ 20.05.2013թ-ի առարկությունը:
- ✓ Թիվ ԵՄԴ/1124/03/13 դատական գործով 08.05.2013թ-ի վճարման կարգադրությունը:
- ✓ Վճարովի իրավաբանական ծառայությունների մատուցման մասին՝ 07.05.2012թ-ի պայմանագրի պատճենը:
- ✓ Վճարման կարգադրություն արձակելու մասին՝ 25.04.2013թ-ի դիմումի պատճենը:
- ✓ 85.000 դրամի բռնագանձման պահանջի մասին հայցադիմումի պատճենը:
- ✓ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 22.07.2013թ-ի որոշումը՝ հայցադիմումը վերադարձնելու մասին:
- ✓ Ի լրումն ԵԷԴ/0926/02/13 գործով հայցադիմումի կազմված գրության պատճենը:
- ✓ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 01.08.2013թ-ի որոշումը՝ հայցադիմումը վարույթ ընդունելու և պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին:
- ✓ 08.08.2013թ-ի կրկնակի միջնորդության պատճենը:
- ✓ 27.08.2013թ-ի վերաքննիչ բողոքի պատճենը:
- ✓ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.09.2013թ-ի որոշումը՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին:
- ✓ 11.09.2013թ-ի միջնորդության պատճենը:
- ✓ 11.09.2013թ-ի նույնաբովանդակ միջնորդության պատճենը:
- ✓ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 23.09.2013թ-ի վճիռը:
- ✓ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 09.08.2013թ-ի որոշումը՝ պետական տուրքի վճարումից ամբողջությամբ ազատելու միջնորդությունը քննության առնելու մասին:
- ✓ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 20.08.2013թ-ի գրության պատճենը:
- ✓ 08.08.2013թ-ի առարկության պատճենը:
- ✓ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 25.07.2012թ-ի վճարման կարգադրությունը:
- ✓ Փաստաբան Հովհաննես Մաթևոսյանի 10.07.2013թ-ի դիմումը՝ վճարման կարգադրության արձակելու մասին:
- ✓ Փաստաբան Հովհաննես Մաթևոսյանի 08.05.2012թ-ի՝ ի լրումն հայցադիմումի ներկայացված դիմումի պատճենը՝ փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի բռնագանձման պահանջի մասին:
- ✓ Գումարի բռնագանձման պահանջի մասին՝ 08.08.2013թ-ի հայցի պատճենը:
- ✓ 10.09.2013թ-ի N 1, N 2 և N 3 միջնորդությունների պատճենները:
- ✓ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ. Հովհաննիսյանին ուղղված՝ Դիմողի 02.09.2013թ-ի դիմումի պատճենը:

- ✓ Երևան քաղաքի Մալաթիա- Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 15.08.2013թ-ի որոշումը՝ հայցադիմումը վարույթ ընդունելու և պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին:
- ✓ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 10.09.2013թ-ի որոշումը՝ միջնորդությունը բավարարելու և քաղաքացիական գործն այլ դատարանի քննությանը հանձնելու վերաբերյալ:
- ✓ Փաստաբանին տրված հասարակ գրավոր ձևով՝ 07.05.2012թ-ի լիազորագրի պատճենը:
- ✓ 20.05.2013թ-ի առարկության պատճենը:
- ✓ Փաստաթղթերի թվագրման վերաբերյալ ցանկ:
- ✓ Պալատի նախագահին ուղղված՝ 13.04.2015թ-ի դիմումը:
- ✓ ՀՀ վճռաբեկ դատարանի 25.03.2015թ-ի որոշումը՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին:
- ✓ 02.07.2012թ-ի որոշումը՝ կատարողական վարույթ հարուցելու մասին և 02.12.2013թ-ի որոշումը՝ կատարողական վարույթն ավարտելու մասին:
- ✓ 02.07.2012թ-ի որոշումը՝ կատարողական վարույթ հարուցելու մասին և 02.12.2013թ-ի որոշումը՝ կատարողական վարույթն ավարտելու մասին:
- ✓ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 13.05.2011թ-ի որոշումը՝ հայցադիմումը վերադարձնելու մասին:
- ✓ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 26.05.2011թ-ի որոշումը՝ հայցադիմումը վերադարձնելու մասին:
- ✓ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 12.10.2011թ-ի որոշումը՝ քաղաքացիական գործի վարույթը վերսկսելու և հետախուզումը դադարեցնելու մասին:
- ✓ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 18.10.2011թ-ի որոշումը՝ քաղաքացիական գործն ըստ ընդդատության հանձնելու մասին:
- ✓ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահին ուղղված՝ Դիմողի դիմումի պատճենը:
- ✓ Գործը վարույթ ընդունելու և դատաքննության նախապատրաստելու մասին՝ 27.10.2011թ-ի որոշման պատճենը:

Դիմողի կողմից այլ փաստաթղթեր կամ ապացույցներ չեն ներկայացվել՝ կարգապահական գործին կցելու և հետազոտելու համար:

Սույն կարգապահական վարույթով գործի շրջանակներում Պատասխանող Հովհաննես Մաթևոսյանի կողմից ներկայացվել են հետևյալ գրավոր փաստաթղթերը.

- ✓ Պալատի նախագահին ուղղված՝ 29.04.2013թ-ի գրավոր առաջարկը:
- ✓ Թիվ ԵՄԴ/1124/03/13 դատական գործի քաղվածքը datalex.am ինտերնետային կայքից:
- ✓ Պալատի նախագահին ուղղված՝ 04.03.2015թ-ի գրավոր առաջարկը:
- ✓ 01.06.2015թ-ի գրավոր բացատրությունը:
- ✓ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ - ԵՄԴ/0881/02/13 վճռի պատճենը:

✓ Թիվ ԵՄԴ/0881/02/13 քաղաքացիական գործով տրված կատարողական թերթի պատճենը:

Պատասխանողի կողմից այլ փաստաթղթեր կամ ապացույցներ չեն ներկայացվել՝ կարգապահական գործին կցելու և հետազոտելու համար:

Ուսումնասիրելով կարգապահական վարույթի նյութերը և գնահատելով գործում առկա ապացույցները ինչպես նախապատրաստողը, այնպես էլ Խորհուրդը հաստատված են համարում հետևյալ փաստերը.

1. 07.05.2012թ-ին Դիմողի և Պատասխանողի միջև կնքվել է վճարովի իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագիր, որի համաձայն՝ փաստաբանը օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով պարտավորվում է մատուցել քաղաքացիական գործով ըստ հայցի Ալբերտ Մկրտչի Հովհաննիսյանի ընդդեմ Իշխան Թոփալյանի, պատճառված վնասի հատուցման պահանջի մասին՝ հետևյալ վճարովի իրավաբանական ծառայությունները՝ խորհրդատվություն, ներառյալ՝ նրա իրավունքների և պարտավորությունների, դատական համակարգի՝ վստահորդի իրավունքներին առնչվող գործունեության կապակցությամբ, փաստաթղթերի ուսումնասիրում, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը, ներկայացուցչությունը, ներառյալ՝ դատական ներկայացուցչությունը, քրեական գործերով պաշտպանությունը, իսկ վստահորդը իրավաբանական ծառայությունների դիմաց պետք է վճարի 85.000 ՀՀ դրամ գումար:

2. 07.05.2012թ-ին Ալբերտ Հովհաննիսյանի կողմից Պալատի փաստաբան Հովհաննես Մաթևոսյանին 3 տարի ժամկետով տրվել է հասարակ գրավոր ձևով լիազորագիր՝ իր անունից հանդես գալու որպես շահերի ներկայացուցիչ ՀՀ դատական ատյաններում, ինչպես նաև կատարելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածով նախատեսված գործողությունները, այդ թվում՝ այլ անձի փոխանցել լիազորությունները, բողոքարկել դատական ակտը, դիմել իրավասու անձանց՝ վճռաբեկ բողոք բերելու խնդրանքով, իր անունից հանդես գալ և կատարել կատարողական վարույթի հետ կապված գործողությունները:

3. 25.04.2013թ-ին Պատասխանողը գրավոր դիմումով դիմել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ 85.000 ՀՀ դրամ գումարի վճարման կարգադրություն արձակելու մասին պահանջով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դիմողը չի վճարել իրենց միջև կնքված պայմանագրով նախատեսված գումարը:

4. 29.04.2013թ-ին Պալատ է մուտքագրվել Պատասխանողի գրավոր առաջարկը, որի հիման վրա Պալատի նախագահի՝ 02.05.2013թ-ի թիվ 62-Ա/ԿԳ13-010 որոշմամբ կասեցվել է Պատասխանողի նկատմամբ Պալատի նախագահի 22.04.2013թ-ի թիվ 57-Ա/13-010ԿԳ որոշմամբ հարուցված կարգապահական վարույթը՝ նկատի ունենալով, որ տվյալ վարույթի կասեցման համար առկա են <<Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի>> 26-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված հիմքերը:

5. 08.05.2013թ-ին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ. Հովհաննիսյանի կողմից թիվ ԵՄԴ/1124/03/13 գործով արձակվել է վճարման կարգադրություն, ըստ որի՝ պատասխանող Ալբերտ Հովհաննիսյանին առաջարկվել է կարգադրությունը ստանալուց 2 շաբաթվա ընթացքում կատարել հետևյալ գործողություններից մեկը. 1. Կատարել 85.000 ՀՀ դրամ վճարելու դիմող Հովհաննես Մաթևոսյանի պահանջը, եթե պահանջը հիմնավորված է համարում: 2. Դատարանին առձեռն կամ փոստով՝ ստացման մասին հետադարձ

ծանուցմամբ ներկայացնել գրավոր առարկություն, եթե պահանջը դիտում է չհիմնավորված:

6. 19.07.2013թ-ին Ալբերտ Հովհաննիսյանը 85.000 դրամի բռնագանձման պահանջի մասին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով բռնագանձել Հովհաննես Մաթևոսյանից 85.000 դրամ, որպես պաշտպանություն չմատուցած, իրեն վճարած, դատարան մուծման մասին չներկայացրած փաստի, ուստի՝ դատարանի կողմից պատասխանողից չբռնագանձված գումարի պահանջի մասին:

7. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ. Գրիգորյանի կողմից 22.07.2013թ-ին կայացվել է որոշում՝ հայցադիմումը վերադարձնելու մասին, քանի որ հայցվորի կողմից չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածով սահմանված՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջները:

8. Դիմողի կողմից 27.07.2013թ-ին դատարան ներկայացված գրությամբ վերացվել են հայցադիմումի թերությունները և այն 29.07.2013թ-ին մուտք է արվել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան:

9. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ. Գրիգորյանի կողմից 01.08.2013թ-ին կայացվել է որոշում՝ հայցադիմումը վարույթ ընդունելու և պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին:

10. 11.09.2013թ-ին հայցվոր Ալբերտ Հովհաննիսյանը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որով հրաժարվել է ներկայացրած հայցից, քանի որ այդ, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանները մերժել են իր օրինական պահանջը՝ պետական տուրքի վճարումից ամբողջությամբ ազատելու մասին:

11. 23.09.2013թ-ին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ. Գրիգորյանի կողմից կայացվել է որոշում՝ թիվ ԵԷԴ/0926/02/13 գործի վարույթը կարճելու մասին, հայցից հրաժարվելու հիմքով:

12. 11.07.2013թ-ին Պատասխանող Հովհաննես Մաթևոսյանը գրավոր դիմումով դիմել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ 85.000 ՀՀ դրամ գումարի վճարման կարգադրություն արձակելու մասին պահանջով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ալբերտ Հովհաննիսյանը չի կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները և չի վճարել պայմանագրով նախատեսված 85.000 ՀՀ դրամ գումարը:

13. 25.07.2013թ-ին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Հունանյանի կողմից թիվ ԵԱՔԴ/2849/03/13 գործով արձակվել է վճարման կարգադրություն, ըստ որի՝ Ալբերտ Հովհաննիսյանին առաջարկվել է կարգադրությունը ստանալուց 2 շաբաթվա ընթացքում կատարել հետևյալ գործողություններից մեկը. 1. Կատարել 85.000 ՀՀ դրամ վճարելու պահանջը, եթե պահանջը հիմնավորված է: 2. Դատարանին առձեռն կամ փոստով՝ ստացման մասին հետադարձ ծանուցմամբ /տեղեկացմամբ/ ներկայացնել գրավոր առարկություն, եթե պահանջը հիմնավորված չէ:

14. 08.08.2013թ-ին Ալբերտ Հովհաննիսյանը գրավոր առարկություն է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների

ընդհանուր իրավասության դատարան, որով խնդրել է վճարման կարգադրություն արձակելու կրկնվող պահանջը ճանաչել անհիմն և գործի վարույթը կարճել:

15. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.08.2013թ-ի գրությամբ վերացվել է վճարման կարգադրությունը՝ Ալբերտ Հովհաննիսյանի կողմից օրենքով սահմանված երկշաբաթյա ժամկետում վճարման կարգադրության վերաբերյալ գրավոր առարկություն ներկայացվելու հիմքով:

16. 08.05.2012թ-ին Հովհաննես Մաթևոսյանը Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել լրացում փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի բռնագանձման պահանջի մասին հայցադիմումին, որով ավելացրել է հայցապահանջը և խնդրել է Իշխան Թոփալյանից հօգուտ Ալբերտ Հովհաննիսյանի բռնագանձել նաև 85.000 ՀՀ դրամ գումար, որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

17. 08.08.2013թ-ին Հովհաննես Մաթևոսյանը դիմել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ գումարի բռնագանձման պահանջի մասին հայցապահանջով, որով խնդրել է Ալբերտ Հովհաննիսյանից հօգուտ իրեն բռնագանձել 85.000 ՀՀ դրամ, որպես վճարովի իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված գումար:

18. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 15.08.2013թ-ի որոշմամբ Հովհաննես Մաթևոսյանի հայցադիմումն ընդունվել է վարույթ և պետական տուրքի վճարումը հետաձգվել է:

19. 10.09.2013թ-ին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ. Հովհաննիսյանը կայացրել է որոշում՝ պատասխանող Ալբերտ Հովհաննիսյանի միջնորդությունը բավարարելու մասին, որի համաձայն՝ թիվ ԵՄԴ/0881/02/13 քաղաքացիական գործն ըստ ընդդատության հանձնվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

20. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.09.2014թ-ի վճռով բավարարվել է Հովհաննես Մաթևոսյանի ներկայացրած հայցը՝ 85.000 ՀՀ դրամ, որպես վճարովի իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված գումար, Ալբերտ Հովհաննիսյանից բռնագանձելու պահանջի մասին, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել է:

21. Ալբերտ Հովհաննիսյանի բերած վերաքննիչ բողոքը վերադարձվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 03.12.2014թ-ի որոշմամբ, որի դեմ վերջինիս կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք:

22. ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի՝ 04.02.2015թ-ի որոշմամբ ՀՀ վերաքննիչ դատարանի 03.12.2014թ-ի <<Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին>> որոշման դեմ Ալբերտ Հովհաննիսյանի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է և սահմանվել է ժամկետ՝ վճռաբեկ բողոքի ձևական սխալները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար:

23. Վճռաբեկ բողոք է ներկայացրել Ալբերտ Հովհաննիսյանի ներկայացուցիչը՝ պահանջելով բեկանել ՀՀ վերաքննիչ դատարանի 03.12.2014թ-ի՝ <<Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին>> որոշումը:

24. 06.03.2015թ-ին Պալատ է մուտքագրվել Պատասխանողի գրավոր առաջարկը, որի հիման վրա Պալատի նախագահի՝ 09.03.2015թ-ի թիվ 71-Ա որոշմամբ կասեցվել է Պատասխանողի նկատմամբ Պալատի նախագահի 22.04.2013թ-ի թիվ 57-Ա/13-010ԿԳ որոշմամբ հարուցված կարգապահական վարույթը՝ մինչև թիվ

ԵՄԴ/0881/02/13 քաղաքացիական գործով ըստ էության լուծող վերջնական դատական ակտ կայացնելը /ուժի մեջ մտնելը/:

25. ՀՀ վճռաբեկ դատարանը 25.03.2015թ-ին կայացրել է որոշում՝ <<Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին>>:

26. 13.04.2015թ-ին Դիմողը գրավոր դիմում է ներկայացրել Պալատի նախագահին՝ խնդրելով վերսկսել կարգապահական վարույթը, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 25.03.2015թ-ին կայացվել է որոշում:

27. Պալատի նախագահի՝ 28.04.2015թ-ի թիվ 93-Ա որոշմամբ վերսկսվել է Պատասխանողի նկատմամբ Պալատի նախագահի 22.04.2013թ-ի թիվ 57-Ա/13-010ԿԳ որոշմամբ հարուցված կարգապահական գործի վարույթը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերացվել է թիվ 57-Ա/13-010ԿԳ կարգապահական վարույթի կասեցման հիմքը, այն է՝ ՀՀ վճռաբեկ դատարանում քննվող թիվ ԵՄԴ/0881/02/13 քաղաքացիական գործով կայացվել է գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտ:

17.04.2015թ-ին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵՄԴ/0881/02/13 քաղաքացիական գործով տրվել է կատարողական թերթ, համաձայն որի՝ Ալբերտ Հովհաննիսյանից հօգուտ Հովհաննես Մաթևոսյանի պետք է բռնագանձել 85.000 ՀՀ դրամ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 08.10.2015թ. տրամադրված ՈԸԴՂ/ԿԳ տեղեկանքի համաձայն Հովհաննես մաթևոսյանը արտոնագիրը ստացել է 24.10.2009թ.: Նախկինում Հովհաննես Մաթևոսյանի նկատմամբ կարգապահական վարույթներ չեն հարուցվել:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հովհաննես Մաթևոսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2-րդ կետի՝

<<Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում>>:

Համաձայն Կանոնագրքի 3.5.5-րդ կետի՝ <<Փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից>>:

Տվյալ գործի պարագայում Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հովհաննես Մաթևոսյանը հնարավորություն չի ունեցել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանիո թիվ ԵՄԴ/0203/02/12 քաղաքացիական գործի շրջանակներում ներկայացնել Դիմող Ալբերտ Հովհաննիսյանի կողմից 85.000 ՀՀ դրամ գումարը վճարված լինելու հանգամանքը

փաստող ապացույցը, այն պատճառով, որ նման ապացույց փաստաբանի տրամադրության տակ առկա չի եղել:

Պալատի խորհուրդը հարկ է համարում փաստել նաև, որ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 26.10.2012թ-ին թիվ ԵՄԴ/0203/02/12 քաղաքացիական գործով կայացրած վճռի դեմ պատասխանող փաստաբանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը, սակայն բողոքը վերադարձվել է՝ Դիմողի կողմից պետական տուրքը վճարելուց հրաժարվելու պատճառով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14-րդ կետի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 22.04.2013թ. թիվ 57-Ա/13-010ԿԳ որոշմամբ փաստաբան Հովհաննես Մաթևոսյանի (արտոնագիր թիվ 956) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:***
2. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Հովհաննես Մաթևոսյանին և դիմող Ալբերտ Հովհաննիսյանին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Երվանդ Վարոսյան**